ԳԻՐՔ LII

# ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 3 ՄԱՐՏ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՈԼԻՑ 7
1909

# ՄԻԱՅՆՈՒԹԵԱՆ ԽՈՀԵՐ

Երկինք, գետինք մթնով բռնած,
Քամին շաչում, շառաչում.
Ու ես մենակ, հոգիս յուզուած,
Սիրտս անյոյս հառաչում...

Ա՜խ, երկնքի բարդ-բարդ ամպեր,
Երնէկ լինիմ ես կայծակ,
Ուժգին բռիչքով չափեմ եթեր,
Դաշտ ու հովիտ ընդարձակ.

Երնէկ պայթեմ ինչպէս ամպրոպ,
Շանթեր տեղամ դէպի ցած.
Մարդիկ սարսած, սրտատրոփ
Նայեն երկինք զայրացած։

Ու ես վերից տամ ամբոխին
Պատգամն ահեղ եւ ըմբոստ.
«Չարիքն է ձեր բռնած ուղին.
«Ապաշաւա՛նք, կամ կորուստ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ